



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

«15» դեկտեմբերի 2016թ.

ԹԻՎ 218

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 09-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ9 -Ն որոշումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ համայնքի ավագանու նշված որոշումը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, համայնքի ղեկավարի համապատասխան գրությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 133 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



գ. Հացիկ
15.12.2016թ.





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9-Ն
«09» դեկտեմբերի 2016 թվականի








**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄԷ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2017 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով 55384,1 հազար դրամ, ծախսերի գծով՝ 55384,1 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 30տոկոսը:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

- | | Կողմ՝ (7) | Դեմ՝ (0) | Ձեռնպահ՝ (0) |
|----------------------|-----------------------------------------------------------------------------------|----------|--------------|
| 1. Ավոյան Արգամ |  | | |
| 2. Արշակյան Համլետ |  | | |
| 3. Թովմասյան Ռոբերտ |  | | |
| 4. Իսկանդարյան Ջիվան |  | | |
| 5. Կարապետյան Սերգո |  | | |
| 6. Մարտիրոսյան Պերճ |  | | |
| 7. Սարգսյան Ստեփան |  | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

09.12.2016թ.
գյուղ Հացիկ

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով՝ Ձեր քննարկմանն է ներկայացվում Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2017 թվականի բյուջեն:

Հացիկ համայնքի 2017 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի հնգամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հացիկ համայնքի 2017թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ ընդամենը 55384,1 հազար դրամ:

Հացիկ համայնքի 2016թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել են 25685,0 հազար դրամ: Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 29699,1 հազար դրամ:

2017թ. հարկերի գծով նախատեսվել է 23920,0 հազար դրամ, որից 170,0 հազար դրամ շենք շին. գույքահարկ, 19500,0 հազար դրամ հողի հարկ և 4000,0 հազար դրամ՝ փոխադրամիջոցների գույքահարկ: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները: Գույքահարկը կանխատեսվել է՝ հաշվի առնելով գանձելիության մակարդակը:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով տեղական տուրքեր նախատեսվել են 250,0 հազար դրամ:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 1765,0 հազար դրամ:

Եկամուտներն ըստ եկամտատեսակների՝ կից հատված 1-ին: Նախորդ 2015թ. փաստացի կատարված, 2016թ. հաստատված և 2017թ. նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է /համեմատական 1/:

ԾԱԽՍԵՐ

Հացիկ համայնքի 2017 թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ ընդամենը 55384,1 հազար դրամ,

այդ թվում՝ ընթացիկ ծախսերի գծով 53904,1 հազար դրամ, կապիտալ ծախսեր 1480, 0 հազար դրամ:

Հացիկ համայնքի 2017 թվականի բյուջեով նախատեսված ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է /հատված 2,3,6/:

Համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2015-2016թթ. բյուջեի փաստացի կատարված և 2017թ. սպասվելիք ծախսերով:

ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 24260,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

01 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով ընթացիկ ծախս նախատեսվել է 21550,0 հազար դրամ և 500,0 հազար դրամ կապիտալ ծախս,

01 բաժին 3 խումբ 3 դաս՝ « Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 300,0 հազար դրամ,

01 բաժին 6 խումբ 1 դաս՝ « Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/» ծրագրով նախատեսվել է 1910,0 հազար դրամ ընթացիկ ծախս:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 900,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

04 բաժին 5 խումբ 1 դաս՝ «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրով՝ 900,0 հազար դրամ ընթացիկ ծախս:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 2270,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 2270,0 հազար դրամ ընթացիկ ծախս:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 06 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 12650,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

06 բաժին 3 խումբ 1 դաս «Զրամատակարարում» ծրագրով 8670,0 հազար դրամ ընթացիկ ծախս և 980,0 հազար դրամ կապիտալ ծախս ,

06 բաժին 4 խումբ 1 դաս «Փողոցների լուսավորում» ծրագրով 3000,0 հազար դրամ ընթացիկ ծախս:

ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 20120,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 1 դաս՝ «Գրադարաններ» ծրագրով 970,0 հազար դրամ ընթացիկ ծախս

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակութային հիմնարկներ» ծրագրով 950,0 հազար դրամ ընթացիկ ծախս,

08 բաժին 3 խումբ 1 դաս՝ «Հեռուստառադիոհաղորդումներ» ծրագրով 100,0 հազար դրամ ընթացիկ ծախս,

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 500,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅՂԹՎՈՒՄ

09 բաժին 5 խումբ 1 դաս ` «Արտադպրոցական կրթություն» ծրագրով 500,0 հազար դրամ ընթացիկ ծախս,

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ 6500,0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅՂԹՎՈՒՄ

10բաժին 7 խումբ 1 դաս ` «Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ » ծրագրով նախատեսվել է 6500,0 հազար դրամ ընթացիկ ծախս: Այս ծրագրում ընգրկվել են սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնություն տալու համար ծախսերը: Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ` համայնքի ղեկավարի որոշմամբ` քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա :

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 7764,1 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅՂԹՎՈՒՄ

11 բաժին 1 խումբ 2 դաս ` «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 7764,1 հազար դրամ, որից 1480,0 հազար դրամը վարչական բյուջերց հատկացում է ֆոնդահին բյուջե: Պահուստային ֆոնդը կարող է օգտագործվել տվյալ տարվա չկանխատեսված ծախսերի համար` միայն համայնքի ավագանու որոշմամբ:

Նախորդ 2015թվականի փաստացի, 2016թվականի հաստատված և 2017թվականի նախատեսված ծախսերի` գործառնական և տնտեսագիտական դասակարգման, դեֆիցիտի, մարման աղբյուրների, առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են /համեմատական 2,3,4,5,6/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐՁԻ ՀԱՅԻԿԻ
ՀԱՍԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱԲԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը
	Համայնքի ղեկավար	1	270 000
	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	132 600
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
	Աշխատակազմի քարտուղար	1	132 600
	Գլխավոր մասնագետ	1	112 500
	Առաջատար մասնագետ	2	92 700
	Առաջին կարգի մասնագետ	2	79 400
	Երկրորդ կարգի մասնագետ	1	77 905
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
	Վարորդ	1	77 905
	Հավաքարար	1	72 751
	Պահակ	1	72 751
	Ընդամենը	12	1 293 212

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐՁԻ ՀԱՅԻԿ
ՀԱՍԱՅՆՔԻ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 1
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը
1	Գրադարանավարուհի	1	72 751
	Ընդամենը	1	72 751



2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐՁԻ «ՀԱՅԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 2
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը
1	Տնօրեն	1	77 905
2	Քանոնի դասատու	1	77 905
	Ընդամենը	2	155 810

Համայնքի ղեկավար



Ա.Եղիազարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

(մարզի անվանումը)

ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Հացիկ համայնքի

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 9-Ն որոշմամբ

(ամիսը, ամսաթիվը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա.Եղիազարյան

(անունը, հայրանունը, ազգանունը)